

ՀՏԴ 81.37

Հայոց լեզու

Լուսինե ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱրՊՀ ակ. Ս. Արքահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ,

Բ.Գ.Թ.

E-mail: margaryanlusine06@asu.am, margaryan.lusine@yandex.ru

ԱՐՑԱԽԻ ԱԿՆԱԴՔՅՈՒՐ ՀԱՄԱՆՈՒՆ ԲՆԱԿԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ակնադրյուր բնականվան համանունությունը լեզվական փոխադրության բառապատճենման հետևանք է. Ասկերանի շրջանի **Ակնադրյուրը**, Ղարաբուլադ-ի, իսկ Հադրուրի շրջանի **Ակնադրյուրը**, Աղբուլադ-ի փոխադրություն վերանվանումներն են:

Ասկերանի շրջանի **Ակնադրյուր** անունը գյուղի մեծ ու հիմնական, ընդերքից բխող **Ակն** աղբյուրանունից է առաջացել. իմաստային թարգմանությամբ ամրագրվել է օտարալեզու **Ղարաբուլադ** անվամբ, ապա և անկախության շրջանում վերանվանվել **Ակնադրյուր**:

Հադրուրի շրջանի **Ակնադրյուր** բնակավայրի անվանումը մասնակի բառապատճենում է **Աղբուլադ** անվան: Ենթադրելի է, որ ջրանունից չի առաջացել բնականունը. այն առավելաբար եկամուտ անվան ամրագրում է, ապա և անկախության շրջանում՝ թարգմանության հետևանք:

Բանալի բառեր՝ **Ակնադրյուր**, **համանուն բնականուն, ստուգաբանություն, Ղարաբուլադ, Աղբուլադ, Հադրուրի շրջան, Ասկերանի շրջան, բառապատճենում**:

Լ. Մարգարյան

ПО ВОПРОСУ ЭТИМОЛОГИИ ОМОНИМИЧНЫХ ОЙКОНИМОВ АКНАХБЮР В АРЦАХЕ

Омонимия ойконима Акнахбюр возникла вследствие лингвистического переноса – калькирования: Акнахбюр Аскеранского района является переименованием Карабулаха, Акнахбюр Гадрутского района – Агбулага. Название Акнахбюр

Аскеранского района произошло от Акн - большого и основного водного источника, берущего свое начало в недрах земли. Смысловой перевод был закреплён за иноязычным названием Карабулах, который в период независимости был переименован в Акнахбюр. Название ойконима Акнахбюр Гадрутского района является частичным калькированием Агбулага. Предполагается, что он не произошёл от названия гидронима, а является пришлым названием и в период независимости Арцаха был переименован в Акнахбюр.

Ключевые слова: Акнахбюр, омонимичный ойконим, **этимология**, Карабулах, Агбулаг, Гадрутский район, Аскеранский район, калька:

L.Margaryan

**ON THE ETYMOLOGY OF HOMONYMOUS OIKONYMS
AKNAKHBYUR IN ARTSAKH**

The homonymy of the oikonym Aknakhbyur is a result of linguistic transfer - calquing: Aknakhbyur of the Askeran region is the renaming of Karabulakh, Aknaghbyur of the Hadrut region - Agbulag. The name Aknakhbyur of the Askeran region comes from Akn - a large and main water source, originating in the bowels of the earth. The semantic translation was expressed in the foreign name Karabulakh, which was renamed Aknakhbyur during the period of independence. The name of the oikonym Aknakhbyur of the Hadrut region is a partial calquing of Agbulag. It is assumed that it did not come from the name of the hydronym, but was an alien name renamed Aknakhbyur during the period of independence of Artsakh.

Key words: Aknakhbyur, the homonymy of the oikonym, **etymology**, Karabulakh, Agbulag, Hadrut region, Askeran region, calquing.

Տեղանվանական համակարգում համանունությունը խրախուսելի չէ. այն հասցեն վերաճզորտելու պահանջ է առաջադրում, բայց և իբրև երևույթ անխուսափելի է, եթե համանունության առաջացման պատճառը պատմական պայմանների նույնականությունն է կամ բնաշխարհի նկարագրի ընդհանրությունը:

Ակնաղբյուր¹ բնականվան համանունությունը ծնունդ է լեզվական փոխադրության. Ասկերանի շրջանի **Ակնաղբյուրը**, **Ղարաբուլաղ-ի**, իսկ Հաղբյուրի շրջանի **Ակնաղբյուրը**, **Աղբուլաղ-ի** փոխադրություն վերանվանումներն են:

¹ ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին, ԼՂՀ 1998թ. հունիսի 26-ի ՀՕ-15 օրենքի /1998թ.դեկտեմբերի 12-ի ՀՕ-34, 2000թ. մարտի 10-ի ՀՕ-98, 2001թ. հունիսի 13-ի ՀՕ-150, 2003թ. մայիսի 15-ի ՀՕ-43, 2004թ. մայիսի 10-ի ՀՕ-106, 2005թ. մարտի 9-ի ՀՕ-174, 2006թ. հուլիսի 3-ի ՀՕ-296, 23.05.2007թ. ՀՕ-28, 2007թ. հունիսի 30-ի ՀՕ-41, 2008թ. ապրիլի 4-ի ՀՕ-7 օրենքների լրացումներով և փոփոխություններով/ Հավելված 2

Դառնանք առաջինին: **Ղարաբուլաղ-ը Գարաբուլաք, Կարաբուլակ** հնչատարբերակներով է վկայված: Ղ. Ալիշանի մոտ **Ղարապուլագ** է անվանված¹: Բ. Ուլուբաբյանն էլ նշում է, որ 1920թ. ապրիլին Դրոն, գալով Արցախ, իր նստավայրն էր դարձրել Վարանդայի **Ղարաբուլաղ** գյուղը²: Տեղանվանական բառարանում՝ բնականվան տեղեկանքում, տրվում է, որ նախկինում այն Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառում էր, Քեռնդալան գետով բաժանված էր երկու մասի, ու նաև նշվում է, որ այն համանուն հորդառատ աղբյուրի մոտ է գտնվում³: Համանուն աղբյուր ասելով՝ նկատի է առնվում գյուղի նշանավոր **Ակն** աղբյուրը: Հատկանշելի է, որ երբևէ այդ աղբյուրը **Ղարա** անվամբ չի կոչվել: Այն իր ծննդյան օրից ցայսօր **Ակն** էր կոչվում: **Ակնը** ընդերքից բխող, հորդառատ մեծ աղբյուր էր, ամռանը՝ սառը ջրով, ձմռանը՝ տաք: Գյուղի Ակն աղբյուրը բնակավայրի ջրային հիմնական պաշարն էր ապահովում, իսկ ձմեռային շրջանում նաև անասուններին ջրելու հիմնական վայրն էր: Ակը գտնելու և հունը փոխելու նպատակով աղբյուրը փորվել է⁴, ինչի հետևանքով ժամանակի ընթացքում ջուրը պակասել է, նաև տեսքով անշքացել, բայց շարունակում էր մնալ որպես գյուղի հիմնաղբյուր:

Բարբառում **ակն** անվանում են ընդերքից բխող աղբյուրները: Տեղանվանական հայտնի իրողություններից է, երբ ջրանունից բնականունն է ծնվում: Բնականաբար, ջրանունն ավելի հին է, քան բնականունը: Իսկ ջրանունը **Ակն** էր և է⁵: **Ակնաղբյուրի Ղարաբուլաղ** վերանվանումն էլ իրականում հայկական **ակն**-ի՝ անվան իմաստային թարգմանությունն է՝ **ստորգետնյա, ընդերքից բխող** նշանակությամբ:

Հայտնի է, որ **կարա** եզրույթը բազմանշանակ է: Այն ունի ինչպես **սև**, այնպես էլ **մեծ** նշանակությունները, նաև **ստորգետնյա** իմաստն ունի⁶ հատկապես աղբյուրների վերաբերմամբ գործածվելիս՝ ցույց տալով նրանց առաջացման պայմանները⁶:

Ղարաբուլաղ-ի դեպքում **սև** աղբյուր վերլուծությունն անիմաստ է: Մինչդեռ հաճախ է տեղանվան բաղադրիչների պարզագույն վերլուծությամբ մեկնաբանվում անվանումը: **Ղարաբուլաղի** ստուգաբանությունը

¹ Ալիշան Ղ., Արցախ, էջ 117:

² Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 229:

³ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., հ. 3, Ե., 1986, էջ 524:

⁴ Համագյուղացիների վկայությամբ՝ կոլտնտեսության նախագահ Բաղդասար Ղարամյանի հանձնարարությամբ աղբյուրը փորվել է՝ ակը գտնելու նպատակով (Բ. Ղարամյանը ղեկավարել է համայնքը 1961-1971թթ.):

⁵ Ակնաղբյուրը մեր հայրենի գյուղն է:

⁶ Никонов В. А., Введение в топонимику, Изд. "Наука", Москва, 1965, стр.57.

փաստաթղթային աղբյուրներում տրված է օտարահունչ այդ բարդության բաղադրիչների բառական իմաստների վերլուծությամբ: Մերգեյ Մելքումյանը նշում է, որ գյուղանունն առաջացել է գյուղի մոտ գտնվող մեծ աղբյուրի անունից ու անորոշ հայտնում, թե, չգիտես ինչու, այն կոչվել է **Սև աղբյուր**¹: **Սև աղբյուր** մեկնությամբ է բնականունը նշում նաև Մակար Բարխուդարյանը²: Իսկ Թեմուր Ամիրջանյանի կարծիքով՝ բնակավայրի նախանվանումը եղել է **Վարաբակն**³: Իբրև ճիշտ անվանաձև՝ Սլավա Սարգսյանը նշում է **Քարաղբյուր**⁴: Մինչդեռ փաստն այն է, որ այդ աղբյուրը երբևէ **Ղարա** կամ **Սև** անունով չի կոչվել: Այն միշտ **Ակն** է կոչվել ու եթե օտար **ղարա**-ով է թարգմանվել, ապա իր **առաջացման պայմանների**՝ ընդերքից բխելու և իր **մեծության** պատճառով: Առավել հավանական է, որ այս դեպքում տեղանիշ **կարա** համանուն միավորի մեկ այլ եզրն է անվանակոչման հիմք դարձել. **կարա**-ն ունի *նեղուց, անցք, ջրային տարածքի խորք* նշանակությունները: Ջրանուն հիմքով մի շարք այլ օտարանուն տեղանունների և մանրատեղանունների հիմք է դարձել հենց այս եզրը⁵: Եվ քննվող բնականվան դեպքում, որի ծագումն, անշուշտ, աղբյուրանունից էր, **ղարա**-ով փոխադրությունը պիտի ընկալվել իր բազմանշանակությամբ ու ամենից առաջ *ստորգետնյա անցք, խորք* և *մեծ* իմաստներով:

Փաստորեն, գյուղի անվան մասին արձանագրություններից ակնհայտ է դառնում, որ գյուղանունը ջրանունից է առաջացել՝ թարգմանաբար և օտարալեզու՝ **Ղարաբուլաղ**, 1920-1962թթ. արխիվային փաստաթղթերում այն դեռևս օտարալեզու անվամբ է վկայված⁶: **Ակնաղբյուր** վերանվանման առաջարկ ներկայացվել էր 1988 թ.՝ Արցախյան շարժման զարթոնքի շրջանում: Այս անվանումը՝ որպես գյուղանուն, պատահական չէ, ու այս դեպքում այն տեղանվանական բարեհաջող գյուտ է:

Մյուս **Ակնաղբյուրի՝ նախկին Աղբուլաղի** մասին տեղանվանական բառարանում տրվող տեղեկանքում նշվում է, որ այն մտնում էր Դիզակի մեջ, որը կազմում էր Ելիզավետպոլի նահանգի Կարյազինոյի գավառի բաղկացուցիչ մասը: Բնակիչների նախնիները եկել են Ղարադաղից՝ 1829 թ.:⁷

¹ Մելքումյան Ս. Ա., *Լեռնային Ղարաբաղ*, Ե., 1990, էջ 127:

² Բարխուդարյանց Ս., *Արցախ*, էջ 93:

³ Սովետական Ղարաբաղ, 8.12.1988, N 281:

⁴ Սարգսյան Սլ., *Արցախի բնակավայրերը*, «Հայ Էդիթ», Ե., 1996, էջ 51:

⁵ Мырзаев Э. М., *Словарь народных географических терминов*, "Мысль", Москва, 1984, стр. 255-256.

⁶ ԼՂՀ պետական արխիվ, ֆ.1, ց.1, գ. 17:

⁷ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., հ. 1, Ե.1986, էջ 166:

Նշենք, որ նույնանուն գյուղակ, ավերակ իջևանատուն և լեռնանցք կար նաև Իրանում՝ Ղարադաղում: Մերգեյ Մելքումյանը բնականունը կապում է գյուղի արևելյան մասում՝ անտառում, գտնվող աղբյուրի անվանը, որը կոչվում է **Սպիտակ աղբյուր**: Ու նաև նշում, որ բնակիչները եկել են Պարսկաստանից¹: Մակար Բարխուդարյանցն էլ հաստատում է, որ «Բնակիչք գաղթած են Ղարադաղից, հողն արքունի և անջրդի է: Սոկրատ Խանյանը նշում է, որ գյուղն ուներ Մեծ աղբյուր, որի գոռն ու շրջակա թասը սպիտակ կրաշաղախով էր պատված, որից էլ աղբյուրը ստացել է **Սպիտակ** անվանումը²:

Այն, որ **Սպիտակ աղբյուրից** է առաջացել գյուղանունը, և **Աղբուլաղը** պարզապես համարվում է աղբյուրի բառացի պարզագույն թարգմանություն, նշում են գրեթե բոլորը: Նշենք, որ **Աղբուլաղ** կարող էր նշանակել ոչ միայն սպիտակ աղբյուր, այլև ամենից առաջ՝ վերգետնյա ջրերից սնվող աղբյուր, որովհետև **աղ** բաղադրիչը **կարա**-ի հակառակն է, և աղբյուրները նշելիս այն գործածվում է իր մեկ այլ իմաստով, որով նշում է աղբյուրի առաջացման պայմանը: Հատկանշելի է նաև, որ նշյալ Սպիտակ աղբյուրն իսկապես սնվում է վերգետնյա ջրերից:

Եթե իսկապես գյուղանունը ջրանունից է առաջացել, ապա նշանակում է գյուղի նախանվանումը **Սպիտակաղբյուր** էր: Մինչդեռ քիչ հավանական է թվում այս մեկնաբանությունը, բացի այդ էլ, այդպիսի արձանագրություն չկա որևէ փաստաթղթում: Ինչպես արդեն նշեցինք, Ղարադաղում առկա էին նույնանուն բնակավայրեր: Քանիցս բռնագաղթվել է մեր բնակչությունը և բնակություն հաստատել տարբեր վայրերում, ապա և անվտանգ պայմաններ ստեղծվելու դեպքում վերադարձել իր տունը: Այսպես մեր տեղանուններն էլ թափառիկ են դարձել, ու մեր տեղանվանական համակարգում էլ փոխադարձաբար եկամուտ անվանումներն են ավելացել: Հնարավոր է՝ հայրենիք վերադարձած ու նոր բնակավայր հիմնած մարդիկ իրենց հետ բերել են այնտեղի՝ Ղարադաղի բնակավայրի անվանումը՝ Աղբուլաղ, որը նոր ժամանակներում վերանվանվել է **Ակնաղբյուր**: Այն, որ ջրանունից չի ծագել բնականունը, ակներև է, որովհետև աղբյուրի **սպիտակ** գույնն ի բնե չէր, և աղբյուրն էլ ինքնաբերական չէր, այլ կառուցված: Ի տարբերություն Ասկերանի Ակնաղբյուրի՝ այս Ակնաղբյուրն արդեն նոր անվանակոչում է և այդ բնակավայրի անցյալի հետ կապվում է այնքանով, որքանով որ ջրանվանական խորհրդանշում է:

¹ Մելքումյան Ս. Ա., *Լեռնային Ղարաբաղ*, Ե., 1990, էջ 263-264:

² Խանյան Ս., *ԼՂՀ վաստակավոր գործիչ, Բ.գ.դ., պրոֆեսոր/ծնունդով՝ ակնաղբյուրցի/*:

Ակնադրյուր համանուն տեղանունների քննությամբ թե՛ անվան, թե՛ անվանադրի կենսագրությունն է բացահայտվում: Լևոն Հարությունյանը անվանադրումն իբրև իրողություն բնութագրում է. «Գտնված տեղանունը դիպուկահարի անվրեպ կրակոցի է նման, ու եթե նկատի ունենանք, որ անունն արարվել է մեր խելամիտ նախնիների կողմից սրբազան պատասխանատվության զգացումով, խորիմաստությամբ ու ճշգրտությամբ, ապա նրա մեծագույն արժեքը ճանաչելի կդառնա»: Այդ պատասխանատվության հանձնառությունը պիտի ժառանգորդվի, որ պատմական ճշմարտությունն անվիճարկելի մնա:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Բ.Գ.Թ. Հ.Ս.Ղազարյանը: